

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրքուժ են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелкъ»,
Կամ Tiflis, Rédaction «Msehak».
Տէլէֆոն № 252.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առիթներէն).

Յայտարարութիւն ընդունուում է մանա լեզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀիՄԵԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐԱՅԻՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի հարցի առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Հայոց Թատրոն. Նամակ Օղեսայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կեանքի վեպերը.

ՄԻ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

Մենք մեծ բազմ ենք համարում, երբ աշխարհում է մի որ և է արդիւնք արտաճանելի դէպքի արտաճանալի. Մեզ համար պարծանքի առարկայ է այն բանը, որ մեր մեծագոյնը, մեր նաւթը, մեր մեծաշնորհը, մեր բուրգը ընդունակութիւն են գտնում միջազգային վաճառահանցում և այնտեղ ծախսում են թանկ գներով:

Հարց է առաջ գալիս, թէ որքան ուրախալի է առհասարակ արդիւնքների արտաճանելի դէպքի արտաճանալի և արդեօք պէ՞տք է նոր ջանքեր գործ դնել կարելիին չափ ընդարձակելու մեր երկրի արդիւնաբերութեան առարկաների արտաճանալի, թէ պէ՞տք է հետեւել ուրիշ ուղիներին:

Անկասկած արդիւնքների արտաճանալի մեր տեղի ունի այն պատճառով, որ նոյն արդիւնքները աւելի լաւ գներով չեն կարողանում սպառվել և գործադրվել մեր երկրում: Արտաճանալիով ուրիշ տեղեր և ծախսվելով թանկ գներով մեր արդիւնքները շահ են տալիս իրանց արդիւնաբերողին և այդպիսով գործում են նրան ընդարձակելու և զարգացնելու իր գործը: Ենթոյն արտաճանալի մեր երկրի մի քանի արդիւնաբերութիւններ պահպանում են իրանց գոյութիւնը և եթէ որ և է պատճառով կանգ առնել արտաճանալիները, կը վնասվէր արդիւնաբերութիւնը զգալի կերպով և կամ բոլորովին կը քայքայվէր:

Ներդնելով արտաճանալիների բարեմասնութիւնները, մի և նոյն ժամանակ պէ՞տք է եռանդուն կերպով աշխատել, որ մեր երկրի ինքն ընդարձակել իր պահանջները և ուժեղացնել իր սպառողական ընդունակութիւնը: Եթէ, օրինակ,

կարելի լինէր մեր արդիւնաբերում մեծաբար, բուրգը, բամբակը մեր երկրի մէջ գործադրել և նրանցից պատրաստել այն իրերը, որոնց մենք գնում ենք մեր երկրից, զուրս տեղերում, անշուշտ դա մեզ համար աւելի օգուտ կը լինէր, մինչդեռ այժմ մենք ծախում ենք մեր հում նիւթը ուրիշներին և իստոյ նոյնը գնում ենք մշակված և աւելի ևս թանկացրած:

Որպէս զի կարողանանք աւելի միտթարական գրութեան մէջ լինել, մենք պարտաւոր ենք մի կողմից զարգացնել մեր մէջ տեղիւնկայի կատարելագործութիւնները, իսկ միւս կողմից ուժեղացնել մեր ազգաբնակչութեան սպառող ընդունակութիւնը: Վերջին ժամանակներս եւրոպական վաճառականական տները սկսել են արտաճանալի մեր երկրից թուղաններ, հաւկիթ և ուրիշ մթերքներ: Այդ իրերը մենք կարող ենք պահպանել մեր երկրում, եթէ մեր ազգաբնակչութիւնը միջոց ունենար բարւոքելու իր սնունդը, մինչդեռ այժմ օրէցօր վատթարանում է նրա սնունդական վիճակը:

Երբ որ երկրի ազգաբնակչութիւնը բաւարար կերպով կապէ և կը սպառէ մթերքները, այն ժամանակ նա ինքը կը կազմէ մի լաւ ներքին վաճառահանց իր երկրի արդիւնքների համար, մի վաճառահանց, որ կախված չի իրի արտաքին ընդհարումներից և քաղաքական նկատումներից և կունենայ կուլտուրական ոյժ:

Այն ինչ կը մնայ այնուհետեւ աւելորդ և անգործադրելի երկրի մէջ, կարող է արտաճանալի երկրից դուրս և աւելացնել մերից դրամական միջոցները: Այդպիսով ճշգրիտ համար պարզ է, որ խրախուսելով իրերի արտաճանալիները մեր երկրից, պէ՞տք է զուգընթաց կերպով աշխատել, որ մեր երկրի ինքն ստիպէ մշակել իր հում նիւթերը և մեծացնել իր ազգաբնակչութեան ոյժը—գներու իրեր և սպառելու նրանց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Վիեննայի Միտթարեաններն էլ մեծ հանդէսով տոնել են իրանց ուխտի հիմնադրութեան

երկու հարիւրամեակը: «Հանդէս Ամսօրեայի» սեպտեմբերի համարը ամբողջովին նուիրված է այդ տոնախմբութեան Տպված է այդ համարը չեղ, թանկագին թղթի վրա եւ այնպէս մատուցելով, որ միայն Միտթարեան տպարանից կարելի է սպասել Գեղեցիկ են մանաւանդ այն բազմաթիւ պատկերները, որոնք ներկայացնում են կատարված հանդէսի մի քանի տեսարանները եւ Վիեննայի Միտթարեան վանքի զանազան մասերը: Շատ գեղեցիկ է նաեւ Միտթար արքայի մեծագործ նկարը, տպված առանձին թղթի վրա—Գաղտնի բովանդակութեան, մենք պէ՞տք է ասենք, որ նա բաւական ազդեալ է: Մի յօդուած Միտթարի մասին, որի մէջ ոչինչ նորութիւն չենք գտնում, Վիեննայի եւ Կ. Պոլսի հանդէսների մասնաձեւերը նկարագրութիւնները—հաւ ինչ ենք գտնում յօդուածական համարում: Չենք ասում թէ դրանք աւելորդ յօդուածներ են, բայց մենք սպասում էինք տեղի լուր գործի Վիեննայի Միտթարեանների պատմութիւնը այսպէս թէ այնպէս յայտնի է ազգին: Բայց Վիեննայի Միտթարեանները պակաս գործ չեն կատարել մեր գրականութեան ասպարէզում: Նրանք էլ տուել են գնահատելի, նշանաւոր գործեր, հարստացրել են մեր գրականութիւնը մանաւանդ գիտական գործերով, հրատարակել են մի այնպիսի փառաւոր գործ, որպիսին է մեծ աշխատանքը Միտթարի կերպի յօդուածի առիթով տալ այդ գործունէութեան նկարագիրը, ծանոթացնել անհետացած եւ այժմ գործող գրական գէժերը մի խօսքով գտնել մի թեթեւ հաշիւ ներկայացնել մեր հասարակութեան Գիտեն, ի հարկէ, Վիեննայի Միտթարեանները, որ մի հիմնադրութեան նշանակութիւնը իրենց տալու ամենալաւ միջոցը: Նրա գործունէութեան հետ ծանոթացնելու է: Ցաւում ենք որ նրանք, փոխանակ այդպէս անելու, բաւականացել են հանդէսների նկարագրութեամբ, այն էլ այնպիսի հանդէսների, որ փառաբանված է Արդիւ-Համարը: Դիմենք թէ Կ. Պոլսում հասկանալի է, որ Համարին բարձրացնում են մինչեւ եօթներորդ երկինք. բայց հօ յայտնի է, որ Կ. Պոլսից դուրս, ի պատիւ մարդկութեան, գոյութիւն չունի այդպիսի մի սոսկալի օրբապոսութիւն: Ել հւմ համար են վիեննացիները տպում այդպիսի բաներ եւ ոչ է միամիտ, որ հաւատալ գրանց: Սակայն, ուրախութեամբ պիտի յայտնենք, որ Վիեննայի Միտթարեանները, իրանց յօդուածների

առիթով, հրատարակում են «Աւստրիական հայ լեզուի» անունով մի մեծ աշխատութիւն, որի մասին մանրամասն տեղեկութիւններ են տպված «Հանդէսի» այդ համարում: Նայելով այդ տեղեկութիւններին, այդ աշխատութիւնը պիտի շատ աչքի ընկնող մի երեւոյթ լինի մեր գրականութեան համար: Ահա ինչ է ասում ամառագիրը.

Տպարանին լոյս պիտի տեսնէ՝ առթիւ երկրիւրեւմեայ յօդուածին՝ երկաթուղիներն մը. որ կարծես Միտթարայ յարմարագոյն յօդուածներէն մին պիտի ըլլայ: Երկրի նպատակն է պարզել հայ լեզուի պատմութեան այլ եւ այլ շրջանները, նկարագրելով նաեւ Միտթարայ վերանորոգութիւնը, եւ անոր աշակերտաց ձեռք (ի Վիեննայ) կատարուած առաւել խորագոյն ուսումնասիրութիւնը: Ինչուիս հարազատագոյն եւ ուղեղնային դարձու կերպարանքն երեւան հանելով: Երկաթուղիներն է Հ. Քերովէի վ. Սպենեան, գրեթէ կէս դարու ջանասիրութեան արդիւնք: Գործն՝ ժամանակիս պահանջմանց համեմատ լրացնելու եւ կատարելագործելու համար՝ պէ՞տք եղաւ բազմաթիւ յաւելմանց եւ ձեռնարկմանց: Երկաթուղիներն այսպիսի ընդարձակութիւնը զգալիաբար արեւելք եղաւ գործոյն դիտուած ժամանակին լոյս տեսնելուն:

Մենք էլ, զգալիաբար, պիտի ասենք, որ այդ հրատարակուած աշխատութիւնը գրված է գրաբար լեզուով: Սա Միտթարեանների հին ցան է...

Մեզ ուղարկված է «Печатное Искусство» նոր ամսագիրը, որ սկսեց հրատարակվել Գետերբուրգում: Նկատմանք ամսագրի Այդ նոր պարբերական հրատարակութիւնը, որ ամառը ջապէս նուիրված է տպագրական գործին, թողնում է վերին աստիճանի գեղեցիկ տպագրութիւն իրեն և մի գեղարուեստական գործ, որի մէջ երեւան են գալիս արուեստի բոլոր նորագոյն կատարելագործութիւնները: Ամառագիրը հրատարակում է Գետերբուրգի «Օ. Ի. Լեման» ձուլարանական մեծ ընկերութեան ներկայացուցիչներից մէկը, Ամեն ինչ—թէ տպագրութիւնը, թէ պատկերները, թէ մանաւանդ տպարանական գործերի նմանները կատարված է հիմնալի կերպով: Ամառագիրը նպատակն է առաջնորդ հանդիսանալ տպարանատէրերի համար: Աւելորդ է ասել, թէ որքան համակերպի է այդ նպատակը: Թէ որ աստիճան կարեւոր է մի այդպիսի առաջնորդ, այդ կարելի է իմանալ, նկատել ամենով տպագրական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵԱՆՔԻ ՎԵՊԵՐԸ

II

Խմ փոքրիկ բարեկամակից

Նրա անունն էր Մատիլդ, փոքրիկ Մատիլդ: Վեց-եօթ տարեկան կայառա, շիկահեր աղջիկ էր նա, կապոյտ աչքերով, շատ միամիտ դէմքով, ինչպէս առհասարակ լինում են հիւսիսի մանուկները: Նրա գլուխը պատած էր միշտ մի հնարի թաշկինակով, վզին մի անբաժան շարֆ, որի երկու ծայրերը նա օրով էր քաշ ձգում կրծքի վրա: Թէ ինչ արժէր նրա համար վզի այդ փոքրիկ զարդը, այդ երեւում էր նրանից, որ Մատիլդը ճանապարհ գնալիս անգամ օրում էր երբեմն-երբեմն կանգ առնել և բաւականութեամբ նայել իր շարֆի ծայրերին, յարգարեւ նրա փնջիկները եւ նոյն իսկ ծպտալու եւ նա իրանուէր ունէր ուրախանալու: Նոյն իսկ հպարտանալու. նախ՝ այդ շարֆը շատ էր օրում, գոյնզգոյն ու փափուկ եւ երկրորդ՝ նրա մնացած զգեստն այն աստիճան ուղորդել էր, որ այդ միակ զարդն էլ աւելի աչքի էր ընկնում իր փայլով եւ իր փոքրիկ տիրուհու խղճուկ մանկական պերճասիրութեանը մի փոքր բաւականութիւն էր տալիս: Մատիլդն այն կարգի երեխաներին էր պատկանում, որոնք չը գիտեն ինչ ասել է իրանց

վրա ձեւած ու կարած զգեստ եւ որոնք կարծես աշխարհ են գալիս ունեւորների հնոթները մայրու, նրանց էժան մարդասիրութեան միջոց դաժնալով: Մի նոր զգեստ երեխային, որ քայլելիս մի փոքր խշխշայ, որ հագած օրից խուռնացած չը լինի, որ վրան լաւ նստի, կոճակները միմիկայ լինեն, համաչափ չարված, աս մի ամբողջ երանութիւն է եւ Մատիլդը այդ երանութիւնը՝ միլիոնների համար այնքան սովորական այդ բազդը դեռ չէր ունեցել: Նա միշտ քաշ էր տալիս իր հեռ մի որ եւ է հաստակաւորի երկայն և բազմաձայ իւրեւ, որի մէջ իր խղճուկ օտնները չարժվելիս փաթթվում էին. նա դժուարութեամբ էր քայլում, դժուարութեամբ էր պահպանում իր հաւասարակշռութիւնը: Աւելի ողբալի էր դառնում նրա կացութիւնը մանաւանդ վատ եղանակներին, երբ փէշերը անձրեւի ու ձիւնի մէջ թըղթվում: Քաշ էին ընկնում նրա իրանից ինչպէս մի ծանր բեռ եւ ամեն մի քայլը ձգելիս անախտ չը փոքրիկ ձեռքով ձեռնում էին նրա թըրջած, դողողուն օրունքները: Այդ ժամանակ փոքրիկ աղջիկը նստնում էր ուշ այնտեղ ջրի մէջ ընկած ձուկին, որ քանակ զուրս գալով թափթիթափ է տալիս իր ցակված թեւերը եւ չը գիտէ ինչպէս տաքացնել իր ողորմելի մարմինը արեւի անզօր շողերով: Եւ ամեն անգամ, երբ նրա օտնները խառնվում էին իրար իւր-կայի ծալքերի մէջ, նա օրորում էր, ուղղվում էր իսկոյն նայում էր իր շարֆի երկու փնջերին, որոնց գեղեցկութեամբ ասես մեր-

թափում էր իր խղճութեան մէջ: Երբեմն օրքան քիչ բան է հարկաւոր մի տեւ գոյութեան դաժնութիւնը մեղմելու համար:

Որտեղից էր այդ հանգին լայնածաւալ իւրկան, ով էր տուել Մատիլդին այդ օրուն շարֆը, դժուար էր ասել. խղճների զգեստների պատմութիւնը նոյնքան խառն է, որքան նրանց կեանքը: Ինչպէս մուրադիկի պարկի հացի պատաններն իրար նման չեն, որովհետեւ ամեն մէկը մի դռնից, մի ձեռքից են խլված, այնպէս էլ այդ կարգի մանուկների զգեստի ամեն մի մասը իր տարբեր պատմութիւնն ունի, աշխարհին անծանօթ, բայց հետաքրքիր պատմութիւն, որ խղճներ իրանք էլ չեն օրում պատմել: Դժբաղդութիւնն էլ իր «սրբութիւն» օրբոցն ունի:

Բայց տարբերակը ոչ Մատիլդի սիրուն շարֆն էր, ոչ նրա անտանելի իւրկան, ոչ այն այլանդակ կարծ բաճկուտ, որի ոչ թիկունքն էր յայտնի եւ ոչ մէջքը, եւ որ պարկի պէս քաշ էր ընկել փոքրիկ աղջկայ վտիտ ուսուրից. ամենից ուշադրաւ, ամենից տարբերակը այն մեծ, սպիտակ դաշտամուկն էր, որ շարունակ նրա ուսին էր, խառնում էր պարանոցի վրա, քրքրում էր մազերը, լիւղում էր դէմքը, շրթունքները, շիթը, դուռը նրա էր կոխում նրա շարֆի եւ պարանոցի արանքը, առանց չնչին տահնութիւն պատճառելու իր փոքրիկ տիրուհուն: Մատիլդը նոյն իսկ երբ ջանքի էր երեւում իր միջով, երբ անցորդները հետաքրքրութեամբ ու ծպիտով նայում նայալ

էին այդ անօրինակ ընկերութեանը, նա ձեռքը դնում էր սպիտակ մկան փափուկ մէջքին, օրով նայում էր նրա աչքերի մէջ եւ կարծես ուզում էր ասել.—Ենթոյնալ եմ մուկ, քո շնորհիւ ամառ, որքան մարդ է հետաքրքրվում ինձանով:

Հարուստ, պէնագործ փրկիներն ու օրիորդները փողոցներում քաշ են տալիս իրանց յետեւից սիրուն չըղայով փոքրիկ պարարտ չըներ եւ երբեմն աւելի հետաքրքիր երեւալու համար գրկում են նրանց եւ փայփայում, համբուրում են ինչպէս իրանց զաւակներին: Երջանիկ չներ, որոնք միշտ աւելի կուշա են, աւելի լաւ խնամված, քան միլիոնաւոր խեղճների բազմութիւնը: Ինչ փոքր, նրանց տիրուհիները հպարտ են, երբ կարծես, չունենալ անցորդները հետաքրքրութեամբ, զարմանքով, նաեւ զայրոյթով են դիտում նրանց չների պատանցների արծաթէ օղերը եւ բոժոժները, նրանց մաքուր, փայլուն մօրթին, ինչպէս Մատիլդն էլ չունենալ փոքրիկ մուկը, որ ոչ մի ծախս չէր պահանջում եւ որ նրան միտթարում, զուարճացնում էր:

Փոքրիկ աղջիկը բացի իր մկնից ոչինչ չուներ, որով անցորդների ուշադրութիւնը գրաւելու եւ ամեն ինչ, որպէս զի ամենքն էլ երեւալանքին նրանից—նա փոքրիկ թշուառ էր, իսկ թշուառութիւնն ամեն երկրում, ամեն երկրքի տակ խիստ անախտ զարդ է, որ նրանով հնարաւոր լինի ուշադրութեան արժանանալ:

